



Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բաժին 2 կոպեկ:
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՅԿԵԱՐԹԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ

ԲԱՑՎԱԾ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆՍՏ 1901 ԹԻՎԱՆԻ

ՄԱՍԿ

(29-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԼՐԱԳԻՐԻ

«ՄԱՍԿ» ՀՐԱՏԱՐԱՆՎՈՐ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ

Ա մ ե ն օ Ր Բ ա ց ի տ օ ն ե թ ի ն յ ա ջ ո Ր Գ ո Ղ օ Ր Ե Ր Ի ց :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ. Ա մ ե թ ի ն յ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 7 ռուբլի. Եւ ռ օ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ր ա կ ա ս տ ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄԱՍԿ» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՏԱՆԸ (Բազմաթիւ եւ Բարօնակալ փողոցների
անկիւնը):

Կայքերի համար ուրիշ քաղաքներից «ՄԱՍԿ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրիմը հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ձ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսանողների օգնող ընկերութիւն.—ՆԵՐ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մեր բուրժու-
այի տրամաբանութիւնը. Օպերային ներկա-
յացումները. Քանաչաների ապահովութեան
հարցը. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր. — ՀԵՌԱԳԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ուսանողներին օգնելու նպատակով Հիմն-
վում է Թիֆլիսում մի յատուկ ընկերու-
թիւն: Բարձրագոյն իշխանութիւնը հա-
մակրութեամբ է նայում այդպիսի ընկե-

րութիւն Հիմնելու գաղափարի վրա: Եւ-
րոպայում մշակված է, վերջնականապէս
խմբագրված եւ շուտով կը ներկայացնուի
բարձրագոյն իշխանութեան հաստատու-
թեան:

Շատ ուրախալի է, որ մեր երկրում ա-
ջողվում է Հիմնել մի այդպիսի օգտակա-
ր եւ նպատակայարմար ընկերութիւն: Մեր
երկրից բազմաթիւ պատանիներ իւրաքան-
չիւր տարի ուղևորվում են դէպի Թու-
սաստանի զանազան քաղաքները՝ ուսում
առնելու համար: Նրանք երբեք չեն
բարձրագոյն գաղափարներ: Այդ ուսանող-
ներին մի նշանաւոր մասը լինում է կար-
ողութեան մէջ եւ ստիպված է դիմել ըն-
կերակցների օգնութեան կամ հասարա-

կական բարեգործութեան: Եւ լաւ է եթէ
նպատակ հասնում է ժամանակին եւ իսկա-
պէս օգնում է ուսանողին: Մեր լրագրի
ընկերակցները գիտեն, թէ որքան ուսա-
նողներ նոյն իսկ անկարող են լինում վը-
ճարել իրանց ուսման վարձը, որպէս զի
իրաւունք ունենան զոնկ չը գրկվել այն
ուսումը, որի համար նրանք յանձն են
առել մի շարք զրկանքներ:

Ուսանողներին օգնելու ընկերութիւնը,
անշուշտ, մեծ համակրութիւն կը գտնի
Կովկասի ազգայնականութեան մէջ եւ կը
գտնուի բարերարներ, որոնք առատ նու-
րատուութիւններ կանեն ընկերութեան
նիւթական միջոցները ուժեղացնելու հա-
մար: Թէ այդ նուիրատուութիւնները, թէ
անգամավճարների եւ թէ զանազան հան-
դէսների ու ներկայացումների միջոցով կա-
րելի կը լինի կազմել պատկառելի զուգար-
մը կը գրանցվի օգնել ուսանող երիտասարդու-
թեան:

Մեր երկրի վաղուց կարօտ է այդ տե-
սակ հիմնարկութեան: Ուսանող երիտա-
սարդութիւնը, անջատվելով իր մայր-երկ-
րից հեռու տեղեր, ուր բացակայ են ծա-
նօթներ, ազգականներ, վաղուց զգում էր
օգնող հաստատութիւնների կարևորու-
թիւնը: Առանձին դէպքերում ուսանողու-
թիւնը ստանում էր օգնութիւն մասնա-
ւոր դրամարկներէ եւ ժողովարարութիւն-
ներից: Այժմ այդ բոլորի վրա աւելանում
է մի կազմակերպութիւն, որի յատուկ նը-
պատակն է ուսանողներին օժանդակել:

Պէտք է յուսար, որ հասարակութիւնը
ջերմ աջակցութիւն ցոյց կը տայ կազմա-
կերպվող ընկերութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Բանից դուրս է գալիս, որ պ. Արշակ Չօ-
պանեան դեռ հրատարակում է իր «Անահիտ»
մենք ստացանք այդ գեղարկանական ամսագրի
մի համար, որ բաղկացած է 32 երեսից, բայց

որի վրա դրոշմված է—«Յուլիս, Օգոստոս,
Սեպտեմբեր»: Ամիսը 11 երեսից էլ պակաս մի
բան—դա արդէն մահացութեան նշան է, որ
վաղուց էր նկատվում Պ. Չօպանեան Նուբար-
փաշայի թիւագրութեամբ կամեցաւ թաղել
Ներսէս պատրիարքի անունը, բայց ինքը թաղ-
վեց եւ այդ օրից դուր ջանքեր է անում իր
«ազգային, գրական, գեղարուեստական» հան-
դէսը գերեզմանից հանելու: Այդ ջանքերը այլ
եւս չեն պտտում ոչ գեղարուեստի, ոչ գրա-
կանութեան շուրջը. նրանց ամբողջ հոգին
այժմ այն ազգայնական ճաշերն են, որոնք
Յիւսէփայի մայրաքաղաքում տեղի են ունե-
նում Չօպանեանի մասնակցութեամբ եւ ձեռ-
նդէպութեամբ: Բայց «տոնային» բարեմանու-
թիւնները ներկայացնող կենսացների աղբա-
րար հաճոյքների մէջ պ. Չօպանեան չէ մո-
ռաւում եւ իր անձը պապական անսխալակա-
նութեան կատարեալ մարմնացում ներկայաց-
նել «Անահիտ» այդ եռամսեայ համարում նա
մեղադրում է մեզ անա ինչ պատճառով: «Մշա-
կ» մէջ մենք ասել էինք թէ Չօպանեանի ինք-
նահաւանութիւնը այն ատիճանին է հասնում,
որ նա հեղինակաւոր դատողութիւններ է տա-
լիս նոյն իսկ այնպիսի բաների մասին, որոնց
անձամբ տեղեկ չէ. մենք ասել էինք, որ նա
Տուրքիայի ոճը համարում է ծանր ու անհա-
կանալի: Չօպանեան այժմ ասում է, թէ մենք
խեղաթիւրել ենք նրա սասմանը եւ բերում
է իր իսկական խօսքերը, բայց ոչ բոլորը, այլ
մի մասը միայն, եւ այդ կտորից եզրակացնում
է, որ իբրեւ թէ ինքը այն չէ ասել, ինչ մենք
ենք ասում: Ընդհ. է հայկական գեղարուեստ-
ութեան ներկայացուցչի այս արդարացումը:
Տեսնենք: «Անահիտ» անցնող տարեկան № 11-ի
մէջ պ. Չօպանեան, սաստիկ բարկանալով, որ
մենք պահանջում ենք գրել ժողովրդի համար
պարզ ու հասկանալի ոճով, ասում էր.

Կան անշուշտ գրական գործեր, որոնք
գրւած են շատ պարզ ոճով մը, առանց ձեռի
կնճռոտութեան, եւ այդպիսի գրուածքները
կրնան մասամբ հասկանալի ըլլալ նաեւ ուսու-
կին. այդպէս են ուսու լիւրագրողները (բացի
Թուրքիէնէն, որուն ոճը ամենաբարձր նըր-
բութիւն մը ունի), բայց պէտք չէ ատկից
հետեւցնել թէ ուսուից Տաթայիսիկին ու

չեւի անել հասարակութեան բոլոր խաւերին,
քան տարեկան 5—6 հազար ռուբլի նոր ծախ-
սի մասին մտածել:

Վերջապէս՝ դուք ապացուցե՛ք, որ «Մշակը»
իսկապէս հայ ազգի մշակն է եւ, հաւատարիմ
իր կոչման, պարտաւոր է անել մեզ համար ա-
մեն մի գոհաբերութիւն, ամեն ինչ՝ կարելի
սահմանից մի փոքր էլ դէն անգամ:

Այսպիսի պարագաներում ո՛վ է մեզանից այն
հայը, այն մարդը, որ կը զլանայ իր աշակցու-
թիւնը «Մշակին», ո՛վ որ հէնց մի փոքր դրամա-
նաչ է եւ ունի 10 ռուբլի վճարելու հնարաւորու-
թիւն, չի շտապի գրվել «Մշակին». ո՛վ, վերջա-
պէս, որ կարողութեան, հարստութեան տէր
լինելով՝ կը խնայէ մի քանի հարիւր օրինակ
«Մշակ» տարածել տալ իր հաշուով հազարաւոր
աղբաւոր, բայց ուսումնասիրաւ երիտասարդների,
ուսանողների, ուսուցիչների, քահանայների եւ
այլ եւ այլ ազգային թէ հասարակական հիմ-
նարկութիւնների մէջ՝ թէ քաղաքներում եւ
թէ մասնաւոր գիւղերում:

Անտարակոյս՝ մենք էլ կը կատարենք մեր
պարտականութիւնը, մեր սեպուհ, մեր սրբա-
զան պարտականութիւնը ի տրիտուր ձեր շա-
հաւոր ծառայութեան:

Մենք ձեզ չենք խաբի, ոչ. ձեր վստահու-
թիւնը, ձեր յոյսերը ի դերեւ չենք հանի: Մենք
սիրալիք պատրաստականութեամբ կաշակցենք
ձեզ, թե ու թիկունք կը լինենք ձեր նոր ու
ծանր քայլը ձեզ համար միանգամայն անդալի
դարձնելու համար:

Իսկ դուք շարունակեցէ՛ք գործել աւելի
ջերմ եռանդով:

Գնացէ՛ք առաջ, միշտ առաջ:
Կը հետեւենք ձեզ՝ սերտ կապված...

Սերմացան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Ջ Ա Տ Ժ Ա Մ Ե Ր

Վ Ե Ր Զ ա ղ Է ս

Քանի ամիս առաջ, «Մշակ» № 54-ում,
մենք մի առաջարկութիւն արինք նրա ծա-
ւալը մեծացնելու կամ համարների թիւը ա-
ւելցնելու առթիւ:

Այդ առաջարկութիւնը դուք զրիք հրա-
պարակի վրա, հասարակութեան առաջ՝ առանց
ձեր կողմից մի խօսք ասելու:

Մենք հասկացանք ձեր խորհրդաւոր լու-
թեան պատճառը, լուրիսան, որը անտարա-
կոյս աւելի էր վշտացնում ձեզ, քան ինչ ոքի,
աւելի քան մեզ ամենքիս միասին վերցրած:

Այնուամենայնիւ՝ համոզված լինելով, որ
դուք մի բան պիտի անէիք, անշուշտ որ եւ է
փոփոխութիւն պիտի մտցնէիք «Մշակ» մէջ,
մենք ակնկալում էինք:

Որ «Մշակը» իր ուղղութիւնը փոխողներից
չէ, այդ մեզ շատ լաւ յայտնի է:

Իսկ ծաւալը մեծացնել, համարների թիւը
աւելցնել՝ այնքան էլ հեշտ բան չը պիտի լի-
նէր մի հայ լրագրի համար, մանաւանդ՝ ներ-
կայ պայմաններում:

Շատ կան գեղեցիկ մտադրութիւններ, բա-
րենպատակ, արդիւնաւոր ցանկութիւններ, ո-
րոնք—ցաւ է խոստովանել—չեն իրագործվում
կեանքի մէջ... փողի պակասութեան պատ-
ճառով:

Այն, միմիայն փողի:

Եւ հէնց այդ փողի պատճառով է՝ անշուշտ,
որ «Մշակ» նման անգամ թերթը մեր, հայե-

րիս, մէջ ահա 28 երկար ու ձիգ տարիներ
հրատարակվում է նոյն դիրքով եւ ստիպված
էր չարունակել նոյնութեամբ մինչեւ այսօր:

Բայց ժամանակը խտապահանջ է, անողորմ:
Մեղմացուցիչ հանգամանքներ նա չը գիտէ:

Այլ եւս սպասել, մի փոքր եւս համբերել՝
անհնարին էր...

Անցնում է ժամանակ: Վրա է հասնում լրա-
գրական բաժանորդագրութիւնների սեզոնը,
երբ ամեն ազգերի, ամեն երկրների մամուլի
ներկայացուցիչները մէջ տեղի է ունենում կա-
տալի մրցում, կեանքի եւ մահի կռիւ, երբ
մասնաւոր մեր, հայերիս, մէջ, մի 5—10 ռուբ-
լի փող կամ մի քննադատ բաժանորդ ձեռք բե-
րելու համար իրար գլուխ են պատռում, հա-
զար ու մի տեսակ աքեղակալութիւններ ա-
նում, անթիւ ծիծաղաշարժ խոստումներ եւ
բարեփոխութիւններ հրապարակ հանում, պը-
լիւս՝ տարեկան հինգ անգամ նորանոր անուն-
ներով մկրտվող յաւելումներ, միմիայն երե-
խաներին միայն խաբելու ընդունակ գիղիկ-
պիղիկ պրեմիաներ...

Իսկ «Մշակը»:

«Մշակը» երկար, ֆելդմատիկ, շատերին յու-
սահանդեցնող անգամ լուրիւն պահպանուց
յետոյ, վերջապէս իր 207 №-ում աւետեց մեզ,
որ եկող 1901 թւականի սկզբից, յունվար ամ-
սից, պիտի հրատարակվի շաբաթական վեց
համարով:

Բաժանորդագրելը՝ առանց մի կոպեկ աւե-
լացնելու՝ նոյն 10 ռուբլին:

Մեծ գործ իսկապէս:

Ահազին իրիկ...

Մենք կարգացինք «Մշակ» առաջնորդող
եւ բաժանորդագրութեան բացման յայտարա-
րութիւնը. անհուն բաւականութիւն զգացինք:
Մենք հանգստացանք:

Բայց մի մոռացէ՛ք, առժամանակ միայն:
Մեր փափաքն է տեսնել «Մշակը» ամեն օր,
ասել է տարեկան 365 համար:

Այդ պիտի լինի, եւ, ամբ թէ ուշ, կը լինի
անտարակոյս, անպատճառ:

Այսպէս ուրեմն՝ դուք կատարեցիք մեր
բուն ցանկութիւնը, այն եւս աւելի լայն
հայեացքով եւ սրտով, քան մեզանից որ եւ է
մէկը կարող էր սպասել:

Իմ կողմից՝ ես ողջունում եմ սրտանց «Մը-
շակի» լոյս աշխարհ գալիք վեցերորդ համարը:
Ես ցանկանում եմ «Մշակին» անընդհատ առա-
ջադիմութիւն, անխախտ յարատեւութիւն, եւ
որ զլիւսւորն է, նրա տարածումը ամեն
տեղ՝ աշխարհի բոլոր ծայրերն ու անկիւն-
ները, որ կայ թէկուզ հէնց մի հատ կարգաւ-
գրել իմացող հայ:

Դուք կատարեցիք, կրկնում եմ, մեր իղձը,
ձեր պարտականութիւնը՝ նորանոր ծախքերի
տակ մտնելով, ահազին իրիկ եւ թարկելով
ձեր լրագրի:

Այժմ հերթը մերն է:

Դուք մեզանից պահանջում էք մշտական
համակրութիւն եւ աջակցութիւն: Ուրախու-
թեամբ, մեծ ուրախութեամբ:

Երբ դուք մեզանից ստանալով տասն ռուբլի
տալիս էիք 5 համար, մենք ընդունում էինք
անտրտուն, որ քիչ է, թանկ չէ: Բայց երբ
մենք խնդրեցինք ծաւալը մեծացնել կամ հա-
մարների թիւը աւելցնել եւ դրա համար ա-
ռաջարկեցինք աւելի փող, այն է 12 ռուբլի,
դուք՝ ինքն իրանով հպարտ «Մշակ» ղեկա-
վարները հրաժարվեցին փողից եւ ձրի տուր
մեզ մի աւելորդ համար—տարեկան 50
նոսր.—որին մենք վաղուց, շատ վաղուց ա-
կնկալում էինք:

Դուք աւելի լաւ համարեցիք «Մշակը» մատ-

Անցեալ նոյեմբերի 19-ին, Կաղզուանում սպորտարարգից եւ հանգ, Խորէն եպիսկոպոստեանին յիշատակին հոգեհանգստի կարկատուութիւն տեսնուցին իրենց շնորհակալութեամբ:

կենդանու մէջ խմբակային բազմաթիւ ժողովրդական բազմաթիւ շրանց նիւթական եւ բարոյական կենդանու նշանակութիւնը, եւ մեր հոգեւորական պարտքը թելադրութեամբ միութեան եւ հայ-տութեան յորդոր կարգադրելու, որ զխառնարանէն նրանց ուղարկութիւնը հրաւիրեցինք կենդանու առ ու ծախի խնդրի վրայ, որ ամօթաբեր է մի լեզու եւ կրօն ունեցող հասարակութեան համար՝ աշխարհու եւ աշխարհի ժողովրդի առ-նայ, եւ ապա անցանք նոյն ամսի 18-ին կա-յացած ժողովի պատմութեան, որպէս զի նիւթ-տանք արծ. փոխանորդին՝ իր խոստման համա-ձայն, հաշտութեան հրաւիրել պատահեալ ժո-ղովրդի երկու կուսակցութիւններին:

Երբ մենք ասացինք, «Անցեալ ժողովի ար-ձանագրութիւնը ստորագրելու ժամանակ ամա-կովման դատում եղողները, որոնք ցանկանում էին իրանց վրա անել կենդանու շինութեան շարունակութիւնը եւ բաւարարութիւն տալ-պ. Զանգիւղի շինութեան հատուցանելով նրա ծախսած գումարը, շատերը դուրս գնացին ժո-ղովից եւ չը սպասեցին թիւթի ստորագրու-թեան, որոնց մէջ լսական լսանաւանէ չենք ճանաչում, բացի պ. բժ. Կաճկաճեանից...», այստեղ մեր խօսքը ընդհատուեց. պարոն բժիշկը խօսիչն առաջ եկաւ եւ սկսեց խաղա-րել մեզ ծառայողական այս խօսքերով. «Ենթե-ցէք, հայր սրբազան, ես ոչ ոքի չեմ թող տալ, որ ինձ անարգեն, ես երբեք չեմ փախել հա-սարակց օգուտի եղող նուիրաբերութիւնից, ես իմ քանանակալ ծառայութեամբ ամենքին յայտնի եմ, թէ ես ես այժմ աղքատ եմ եւ իմ կարողութեան ազդի պահանջներին նուիրեմ, բայց եւ այդպէս երբեք չեմ փախած նուիրա-տութիւնից»:

Մի քանի անգամ հրաւիրեցինք պարոնին չը վրդովել, ուշադիր լինել եւ միջոց տալ մեր անվերջ շարունակելու եւ աւարտելու, բայց հնար չեղաւ. նա ամենայն յամառութեամբ շա-րունակեց վրդովված եւ իր ասկիւնները վեր-ձացնելով վկայ կանչեց հասարակութեանը եւ հեռախոս ժողովից: Նշանք տրվեց արդէն. նրա հեռախոսը յետոյ՝ այնպիսի օրոտագին գոչելով, անկողնու աղաղակի ծիծրակ եւ իրաբանքում բարձրացաւ, որ անհնար եղաւ դադարեցնել: Այս ու այն կողմից լսելիցն գոտոցներ՝ «այդի-ցեալ կանչեցէք, օտարներն ընդեք, այստեղ մեծ անկարգութիւններ կը լինեն եւ այն, եւ այն, եւ իրարմ, հասարակութիւնը, երկու տարբարովիք մասերի բաժանված՝ անխոնձա-բար պարտաւոր է մեր եւ հակառակ՝ աստուածա-յին տաճարի մէջ պատասխանատու անխոր-ժուրկներն առաջ բերելու Այլեւս համբերել չը կարողանալով՝ արտածութեամբ լրջված, հրա-ւիրեցինք ժողովրդին թողնել կենդանու եւ դուրս գալ. հետեւեալով նրանց՝ դուրս եկանք եւ մենք հաղթի բազմութեան միջոց:

Դեռ նոր էինք կենդանու դաւթն անցել, երբ մեր առաջը կտրեց պ. Կաճկաճեանը, ծխա-քարը ձեռքին, եւ սկսեց կողոպտել ձայնով գոչել. «Սրբազան հայր, դուք ինձ օտարացեալ վերադարձեցէք, ես ոչ ոքի թող չեմ տալ ինձ նկատելու, թէ ես հասարակական գործի հա-մար նիւթական միջոցներ խնայած եմ, եւ եթէ ես այսօր աղքատ եմ՝ այդ իմ անձնուիրու-թեան հետեւանքն է: Եւ Երանայեալով մեր ճա-նապարհը՝ մեղմօրէն նկատեցինք. «Դուք լաւ չարեք, բժիշկ, որ առանց մեր խօսքերի վերջին սպասելու՝ ձայն բարձրացրիք, որով եւ ժողովը խանգարեցէք, որովհետեւ մենք ոչ փողի ստո-րագրութեան յիշատակութիւն արինք, կամ պէտք է անէինք, եւ ոչ էլ ձեր պատիւը չօշա-փելու միտք ունէինք: Ձեզ եւս յայտնի է, որ անցեալ ժողովի ժամանակ միմիայն արձանա-գրութեան ստորագրութեան խնդիր կար եւ ոչ թէ փողի: Պ. բժիշկը չը բաւականացաւ մեր աղադարարութեամբ եւ կրկին սկսեց իր պատ-ւանդութեան ծառայ. Զը կարողանալով համբերել՝ արգար բարկութեամբ շարժված՝ ասացինք, պ. բժիշկ, դուք հրաւիրէք: Այս խօսքերը վերին աստիճան ցնցելով նրան՝ պա-տասխանեց. «Ես երբեք հրաւիր չեմ, այլ իմ պատիւ եւ պահանջում, եւ իմ կենսութեան այդ-պիսի յանդիմանութիւնների չեմ եմբարկված: Վերադառնալով ասացինք, պ. բժիշկ, դուք հրաւիր-էք, Երբ փողոցի մէջ երրորդ անգամ նա իր պատասխանութեան եւ անձնուիրութեան ծա-խի մեջ հետեւող բազմութեան ներկայու-թեամբ առարկեց ու մեզին պատու պահան-ջեց՝ ամենայն զգուշացնելով ու դատնութեամբ նրան իր արժանի անուամբ կոչեցինք խոսող-րար—բունտովիչի: Եւ այս արար իրաւամբ, խղճով ու մեր պայտօնէն թելադրված, վաճա-րի մոլորված միամիտները պիտի հասկանան վերջապէս, որ պարոնի այդ օրինակ հասարա-կական ծառայութիւնը յիշեալ անուանագրու-թիւնից անկի ուրիշ յարգանքի արժանի չէ եւ այդպիսիք միամիտ ժողովրդին համար գա-թակալութիւն, փորձանք են՝ քան թէ յարգանք:

Դեռ ինչեան չը հասած՝ մի ալեւոր խորին յարգանքով մօտեցաւ եւ օրհնութիւն խնդրեց. տարրուկաւորվել շարունակեցինք մեր ճանա-պարհը, ուղարկութիւն չը դարձրինք՝ անխոր-ժուրկները խուսափելով իրարմիտ ծերունի-ձայնք բարձրացրեց եւ ասացինք կտրեց, ինչ էք կամենում, հարցրինք արտնդաւ Պա-տասխանեց. «Հայր սրբազան, ճանաչում էք մենք ներսէն ձայնապետին, քանի հարկաւոր վանքեր, հիւանդանոցներ, աղքատանոցներ եւ գործենոցներ չինեց ազգի համար, բայց նրան-ս. պատարագի ժամանակ բաժնակով թուխաւ-րեցինք եւ մեղմօրէն, մենք հայ ենք, երախտա-գիտութեան սովոր չենք. մենք եւս, վիճակաւոր

եւս, կարգադրեց կենդանու շինելը, ինչպէս կը հասկանաւ: Մերանու խօսքերը մեր վերաւոր արտին բաւական դարձան. Հասանք ինչեան եւ լսեցինք, որ մեր կենդանու զուրս գալուց եւ հեռանալուց յետոյ՝ աստիճանութեան հրամանով մի քանի անձինք, իրանց անհանգիստ աղմկա-բարոյութեան պատճառաւ, բռնված են, որոնց եւ մի քանի ժամից յետոյ արձակել էին:

Ինչպէս է արդեօք, որ մարդիկ՝ իրենց պատ-ւի խնդիրը գնելուց առաջ, չեն մտածում, թէ Աստուծոյ ազօթից տունն էլ իր արդեւթիւնն ու պատիւնն ունի, որին պէտք է ամենայն պատկանանքով մերձենալ, ինչպէս չեն չիմտե-նու կարծեմ, երբ նրա մէջ խմբված անագին բազմութեան պատիւն են աստուծոյ կոխում եւ նրա կրքերը յուզում, բորբոքում ու արմուկի եւ խոտովութեան պատճառ դառնում եւ ինչէն այս հասարակ ու տարրական ճշմարտութիւնը ան-գոր է բերանել մի որ եւ է անգորգեալ կոչիւ-կար կամ այլ արհեստաւոր հասարակ մանկա-նացու թիւրեւ ներկի է, սակայն լինի կանչ-իր մասին պ. բժ. Կաճկաճեանը, որ հարկաւ աշխարհիկներին շատ բարձր է կանգնած թէ իր գլխով, թէ գրեթով եւ թէ իր համալսարանա-կան դեպքով:

Պ. բժիշկը մեր անքաղաքակրէ վարժուեցը բնորոշել կամենալով՝ չէ բաւականացել «կա-տաղած» եւ այլ բառեր գործածելով մեր գէտ, այլ հեռութեան մոտացութիւնից դուրս է բերել եւ մեր գրած «պնդալու» բառը՝ յանուն Ղլարի կենդանուներին մէկի երեսփոխանին ուղ-ղված, որ առիթ է տալի զարգացական հոգա-բարձրների կողմից իր ժամանակին մեզ ան-ձանարեւո ձգտման՝ ներկայութեամբ Աստա-րանի թիւթական աստիճանի նախադասի Այս, թող ենք տուել մեզ այդ պատիւ անունը տալ միմիայն մի պարոնի, որ հոգաբարձութեան կողմից մեր եւ կոնսիստորիայի անուններով գրված կրկի-նակիներ բողոքներն իբրեւ հետեւանք քանիցս գրված հրամանները անարգելով՝ չէր կամեցել դարձանային հասանելիք հասնող տալ եւ միայն վերջին յանդիմանարարով ու հայր Յովսէփ աւագ քանանայ Բունթաթեանի յորդորանքով՝ կա-րողացել էինք իր ժամանակին իր պարտքը կատարել տալ:

Ուրեմն, պ. Կաճկաճեանը իր մէջ բերած յիշեալ պատմութեամբ ինչն իրեն է դատա-փետում. նա, իբրեւ Ղլարի երկսեռ դարձեցնե-րի նախկին հոգաբարձու, միաժամանակ իր բողոքներով գրգռել է վիճակային իշխանու-թեան ու թիւթակալ առաջնորդին՝ իր քաղաքա-յի երեսփոխանի անհաղադարձութեան դէմ, եւ միեւնոյն ժամանակ պաշտպան է հանդիսացել նրան՝ իշխանութեան խոտովութեան դէմ Պարոնի այդպիսի երկրորդ վարժուեցը կը նշանակէ «բանիւք առ ընկեր» մղել եւ ձեռք առ ինքն յանկուղանքը, իսկ այս արարութեամբ աշխար-հիկ մտքով համադրել է բանաստեղծութեան՝ խոտովարարութեան եթէ պ. բժիշկի այդ հին յատկութիւնը նշանակում է «ժողովրդականու-թիւն» եւ հասարակաց շահերին անձնուիրու-թիւն», որ նա ամենայն առանգապահութեամբ ու սրբութեամբ Ղլարից Կաղզուան է տեղա-փոխել՝ բարձր վազել, այդ մասին իրեն նա-խանձողները դիտար թէ գտնվին:

Սուեղան արեւալուսնոտա Պարզեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժողովրդական լուսաւորութեան միջնա-տրութիւնը կարճ ժամանակից յետոյ կրակէ-քննել միջնակարգ դպրոցներում նոր լեզունե-րի դասաւանդման ծրագիրը ընդարձակելու հարցը:

Միջնակարգ միջնատրութիւնը գտնվում, որ ներկայ ժամանակը առանձնապէս յարմար է ուղղակի առեւտրական յարաբերութիւններ կապելու համար Ռուսաստանի եւ հարաւա-րին Պարսկաստանի միջեւ, առաջարկեց հարա-ւային անդր-ծովեան ուղիղ հաղորդակցութեան ձեռնարկութիւնների ներկայացուցիչների հա-մադրմամբ ժողովին՝ պակասեցրած տարիքներ նշանակել այն բնուրի համար, որոնք Ռու-սաստանի առեւտրա-արդիւնաբերական կենտոն-ներէր ուղարկվում են հարաւ-արարական նա-հանգները եւ հնաւորութեան չափ շուտ եր-թեւելութիւն սկսել այդ ուղղութեամբ: Հա-մադրմամբ ժողովը որոշեց առաջին նիստում այն ֆրակտներին համար, որոնք ուղարկվում են Պետերբուրգից, Մոսկովայից, Տուլայից, Ուսարիովից, Կիւնովից, Վարչովից, Սանկտից, Լոճից Օդէսայի վրայով ինքնաբերաւ, Ռու-սից, Մէլիսայից եւ Պէնջար հարաւ-արարակա-կան նաւահանգիստները, հետեւեալ գները, մանուֆակտուրային ապրանքների համար—22 կ., շաքարի համար—21 կ., մնացած ապ-րանքների համար—20 կոպէկ:

Պետերբուրգի բժշկական ընկերութիւնները միջոցին միջնորդել, որպէս զի օրէնսդրական կարգով յարուցվի մարմնական պատիժը վե-րացնելու հարցը:

Մեշխանների եւ արհեստաւորական դասա-

կարգերի վերակազմութեան հարցը արդէն բազմակողմանի կերպով մշակված է ներքին գործերի միջնատրութեան մէջ եւ այժմ, ինչ-պէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, պէտք է ուղարկվի քաղաքային, մեշխանների եւ արհեստաւորների վարչութիւններին՝ նրանց կարծիքները կազմված ծրագրի մասին իմանա-լու համար:

Կաղզուան Կաղզուան հարցերի վերա-բերմամբ Պետերբուրգում Մտադրութիւն կայ կոնգրէսը գումարել 1901 թ. վերջը կամ 1902 թ. սկզբին:

Ինչպէս հաղորդում են Օդէսայի լրագիրները, այստեղ մտադրութիւն կայ հիմնել կանանց բարձրագոյն մանկավարժական կուրսեր:

Հարց է բարձրացրած փոխադարձ օգնու-թեան համաժողովական դրամարկ կազմել ան-տառային վարչութեան բոլոր ծառայողների համար:

Մամուլի գործիչների առեւտր ընկերութեան մէջ հարց է յարուցված ձրի ապատարան հիմնելու մասին Պետերբուրգում տպագրական այն աշխատաւորների համար, որոնք որ եւ է պատճառով կորցրել են ընդունակութիւնը տը-պագրական աշխատանքի համար:

«Курьер» լրագիրը լսել է, որ մի խումբ առեւ գիտնականներ, որոնք մշտապէս բնակու-թիւն ունեն հաստատած արտասահմանում, դիտաւորութիւն ունեն հիմնել Պարզում մի ազատ համալսարան, որ դաստիարակութիւններ կը կարողանան բացառապէս առեւտր լեզուով:

ՄԱԼԿԱՅԻՑ մեզ գրում են. «Օրվայ նորու-թիւնն է Մալկայի Արեւան կողմից լուսնաշա-լում պղինձ, մարգանց (39%-72%) եւ այլ հանքեր գտնելը, որ յայտնաբերվել են Ա. Մա-րոյեան եւ ընկերները Մալկայից, մանա-ւանդ հանքերին մօտաւոր գիւղերը, սպասում են անհամբեր պեղումներ սկսելուն, եւ մի հրէայ սկսել է, ասում են, ապառիկ ապրանք տալ այն պայմանով, որ փողի փոխարէն մշակ տան եւ գործեն այն տեղերում, ուր ինքը ցոյց պիտի տայ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարսից կառավարութիւնը առաջարկել է պարսիկ առեւտրականների մի խմբին յանձն առնել Հին-Ջուլֆայից մինչեւ Թէհրան խճուղի անցկացնելու գործը, բայց այն պայմանով, որ այդ ճանապարհը անցկացնելու աշխատանք-ները սկսվեն մինչեւ Նոյեմբերի տօնը (մարտի 9-ը) եթէ աշխատանքները չը սկսվեն մինչեւ այդ ժամանակամիջոցը, պարսից կառավարու-թիւնը խճուղու կառուցումը կը յանձնէ առ-եւտր ընկերութեան:

Կ. Պոլսի «Փռնշ» լրագրի թղթակիցը գրում է Նրուսաղէմից, որ առեւտր պաշտոն-ներն ընկերութիւնը չէ կարողանում արցել կաթիլի միախմբների պրօպագանդայի հետ Պաշտախանը եւ Սիբիայում: Թէպէտ եւ պա-լեստինեան ընկերութեանը աճողվել է կարճ ժամանակում բանալ տարրական դպրոցներ Նազարէթում, Բէյրութում եւ ուրիշ տեղե-րում, ինչպէս եւ ուսուցչական սեմինարիա Բէյրութում: Բայց այդ դպրոցները բաւարա-րութիւն չեն տալիս ուղղափառ արարներին: Կաթիլի զարգացումը աշակերտների երրորդ մասից անկի ուղղափառ դաստիարակման արաւ տղաներ են: Թղթակիցն ասում է, որ գրա-պատճառը նիւթական միջոցների պակասու-թիւնն է եւ այն հանգամանքը, որ առեւ տ-սուցիչները չը գիտեն արաբական լեզուն, այն-ինչ կաթիլի ուսուցիչները շատ լաւ գիտեն արաբերէն. եւ այդ է պատճառը, որ ուղղա-փառ արարները գերադասում են կաթիլի դպրոցները ուղարկել իրանց երեխաներին:

—Վրէժայից «Нов. Время» լրագրին հե-տադրում են, թէ սուլթանը հրամայեց ժան-դարմիների գնդապետ Կիւլի-Բէյին ձերբակալել Բիզանիայի, իսկ վերջինս բանակ գրեց Դե-փոլիս լեռների վրայ, չըպակասեց իրան աշ-րանական պահապան զինուորներով եւ ցերեկ-ները խնդրեցին մէջ է անցկացնում իր բա-րեկաններին հետ, իսկ գիւղերները յարձակու-մ են գործում չըվակայ գիւղերի վրա:

—Բուզապետում, չորսհիւ տեղական ար-դիւնագործութեան ճգնաժամին, հաւաքվել են բազմաթիւ անգործ բանւորներ, որոնք հակա-յական թափօրներ եւ ամեն տեսակ ցոյցեր են կազմում քաղաքում: Մօտ օրերում անգործ բանւորների մի առաջին խումբ չըլում էր քաղաքի հարուստ թաղերում եւ թնդային օդը անքն աշխատանք եւ հաց ենք ուզում, աղաղակներով:

—Անգլիական զինուորական միջնատրութիւ-նը հաղորդեց յօդք Կիպրէսէին հետեւեալ մի-ջոցների մասին, որ ձեռք է առել միջնատրու-թիւնը ի նկատի ունենալով իրերի դժուար դրութիւնը հարաւային Աֆրիկայում: Դեպի պատերազմի դաշտը կուղարկվեն չուտով 800 հեծեալ հետեւակներ եւ հեծակներ երկու-գունդ: Կուղարկվեն նոյնպէս կաղթականական ոստիկանութեան զօրաբաժիններ, երբ հետըզ-հետէ նրանք կը կաղթակերպվեն Անգլիայում: Աւստրալիային. եւ Նոր-Զելանդիային առա-ջարկված է ուղարկել հեծակների մի քանի գունդեր: Աւստրալիական կաղթականութիւն-ներէր կուղարկվեն Սֆրիկա 3000 ձիեր: Բո-լոր իօմաներից, որոնք ծառայել են Աֆրի-կայում մի տարուց անկի, կը ստանան օրա-կան 5 չիլլիկ եւ կը մնան Աֆրիկայում մին-չեւ պատերազմի վերջը:

—Սօֆիայում, Բուլղարիայ մայրաքաղաքում, հաւաքված է այժմ դիւղացիների համաժողով, որին մասնակցում են 250 ներկայացուցիչներ զանազան գիւղական համայնքների կողմից: Համաժողովը զլխաւոր նպատակն է ստեղծել նոր քաղաքական գիւղացիական կուսակցու-թիւն: Համաժողովը ամենայն հանգստութեամբ պարապում է իր գործերով: Ի նկատի առնե-լով այն հանգամանքը, որ պարլամենտական ընտրութիւնները մօտ են, իսկ բողաքական գիւղացիները դեռ եւս չեն կարողացել կազ-մակերպել իրանց կուսակցութիւնը, համաժո-ղովը մտնեց չը գնել այս ընտրութիւնների ժա-մանակ գիւղացիների թեկնածութիւնը:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

19 դեկտեմբերի
ԿԱՊԵՏԱԴՑ, 200 մարդուց բաղկացած մի բօքրական զօրաբաժին, Բօքրիայի մի քանի մղն դէպի հիւսիս, կանգնեցրեց երկաթուղու գնացքը, որ կազմված էր դատարի ապրան-քատար եւ ճանապարհորդական մի քանի վա-զաններից: Բօքրները այրեցին գնացքը, գերի վերցրին գնացքում գտնվող կաղթականական զօրքից 60 մարդ, բայց չուտով անքակելին: Մի քանի անգլիացիներ վիրաւորված են: Բօք-միսի իշխանութիւնները քաղաքից դուրս ու-ղարկեցին կանանց եւ երեխաներին:

Կառավարութիւնը Կապի կաղթականութեան 21 չըվաններում, ի միջի այլոց եւ Կապիտադ-տի չըվանում, դիմեց հաւատարմ մնացած հպատակներին մի յայտարարաթղթով, որով առաջարկում է կաղթականիկ վարձուր զօրա-բաժիններ եւ այդպիսով աշխույժ դէպի Կապ ներս խուժած բօքրների արտաքսում գործին: Ապա յայտարարաթղթի մէջ ասված է, թէ բօք-րները խուժել են կաղթականութեան սահման-ներէր ներս Միգելուրդի հարաւային կողմից:

Պեկին, Ենիքայ, գերմանական դեսպան Կիտ-տէլէրին սպանողը, այսօր գլխաւորված է:

Պեկին, Պետութիւնների միացեալ յայտա-գրի օրոշումները ընդունված են անպայման: Զինական միջնորդների լրագրութիւնները ճա-նաչված են բոլորովին կանոնաւոր: Ենիքա-գրում են, որ բանակցութիւնները կըսկսվեն մի շաբաթից յետոյ:

1901-ՆՆ՝ Կիպրէսի հետադիր Պրեսո-

րիայից. «Բօքրների մի փոքր մասը, որ արեւ-ւելքից ներս էր խուժել դէպի Կապ, չեղեց ճա-նապարհը դէպի հարաւ-արեւմուտք եւ անցաւ երկաթուղու դիմ: Իմացօրի եւ Երբօրէի մէջ-տեղում: Գիծը մնացած է բօքրներից: Մենք հալածում ենք նրանց»:

20 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Правитель. Вѣстник»-ում տպագրված է. «Դեկտեմբերի 5-ին Սարգիսում եւ դեկտեմբերի 7-ին Ցիցիկարում հանդիսա-ւոր կերպով օժիվ են տաճարներ յանուն Նի-կողայոս սքանչելագործի: Դեկտեմբերի 1-ին բացված է Պեկինում առաջին ճաշարանը չի-նական աղքատ աղաքանակութեան համար: Զրիաբար բաժանված են բրնձի մօտ 1000 բա-ժիններ եւ միջոցներ են ձեռք առնված հնար եղանակ չափ շուտով ընդարձակելու այդ գործը:

Դեկտեմբերի 19-ին Սիբից ժամանեցին Մեծ Իշխան Ալեքսանդր Միխայլովիչ եւ Մեծ Իշխա-նուհի Կսենիա Ալեքսանդրովնա Օդեսափառ երեխաների հետ:

ՊԱՐԻՉ. Նոր-տարու առիթով Նիսեան պա-լատում տեղի ունեցած դիւղածախական ընդու-նելութեան ժամանակ պապական պատուիրակ Լորէնցիոյի մի ծառ ուղղել Լուրէին: Նա յայտնեց դիւղածախական մարմին բարեմաղթութիւնն-ը նախագահին եւ Ֆրանսիային, ինչեց աղբերի

համակրությունն փայլուն ցույցերի մասին Պա-
րիզում դեպի Ֆրանսիան, որոնք լրագրողներին
տաննելնենք որդի դարձրե՛նք Նա ցանկություն յայա-
նեց, որ եղբայրական սիրոյ կապերը ամրապնդե-
ղեն արդարությունն, համաձայնությունն եւ ըն-
կերթորությունն զազափարնեը ու աւելի եւ
աւելի տարածվեն աշխարհում: Նա վերջացրեց
իր ճառը հետեւեալ խօսքերով. «Մարդկանց չէ
տուած մարդարեանալ նոր դարի պատմութիւնը
եւ նախադասակել, թէ ինչպէս կը տեսնվեն
նրա հաշիւները: Ի նկատի առնելով այդ ան-
յայտութիւնը, որ վրդովում է մտքերը, պա-
հանջ է զգացվում փիլիսոփայական եւ կրօնա-
կան մտքի, վստահարար աղօթքներով զիմելու
առ Աստուած, որի ձեռքումն է ազգերի բաղդը
եւ որ զեկավարում է ժամանակների փոփո-
խականութիւնը: Իր պատասխանի մէջ Լուսն
ամենից առաջ հաստատեց համաշխարհային ցու-
ցահանդէսի աջողութիւնը, որ մի տարի առաջ
ցանկացաւ նրան պատկան պատուիրակը եւ որ
պէտք է վերադրել այն պետութիւնների ան-
կեղծ աջակցութեան, որոնց ներկայացուցիչնե-
րը այսօր չըլապատում են պատուիրակին: «Մեր
ինչորհակալութեան զգալիութեամբ մտա-
բերում են—ասաց նա—այն հրաշալի տեսա-
րանը, որով պարծենում էր Պարիզը: Նա յոյս
ունի, որ ազգերի այդ ցոյցը կը նպաստէ
մարդկության զեկավարող զազափարների տա-
րածմանը: Համաձայնութիւնը, որ այժմ միաց-
նում է համարեա ամբողջ աշխարհի ազ-
գերի զէնքն եւ զիսկումախան, նշան չէ
արդեօք այն բանի, որ ազգերը հակվում են
քաղաքակրթութեան բարձրագոյն ինչորհների
կողմը: Համերաշխութեան այսպիսի արտայա-
տութիւնները իրաւունք են տալիս սպասելու
այն դարից, որի զայուստը մենք ողջունում
ենք, բարեբաղութիւններ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՆԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ:

Յ 5 զեացքը:	Յ 3 զեացքը:
Բաղրից դուրս է գալիս ցեր. 3 ժ. 5 ր. զիշ. 11 ժ. 15 ր.	Բաղրից դուրս է գալիս ցեր. 3 ժ. 5 ր. զիշ. 11 ժ. 15 ր.
Թիֆլիսի հասնում է ցեր. 8 ժ. 23 ր.	Թիֆլիսի հասնում է ցեր. 8 ժ. 23 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 3 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 3 ր.
Բաթում է հասնում ցեր. 9 ժ. 11 ր.	Բաթում է հասնում ցեր. 9 ժ. 11 ր.

Յ 6 զեացքը:	Յ 4 զեացքը:
Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.	Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.
Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.	Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.
Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.	Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.

Յ 7 զեացքը:	Յ 2 զեացքը:
Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.	Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.
Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.	Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.
Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.	Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.

Յ 8 զեացքը:	Յ 1 զեացքը:
Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.	Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.
Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.	Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.
Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.	Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.

Յ 9 զեացքը:	Յ 0 զեացքը:
Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.	Բաթումից դուրս է գալիս 8 ժ. 56 ր.
Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.	Թիֆլիս է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 22 ր.
Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.	Բազու է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱԿԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիւր, Վորոնոյի արձանի հանդէպ)
ա մ ի ն ո Ր, բ ա ճ Ի Կ ի ռ ա կ Ի օ Ր Ե Ր Ի ց:
Ա Ռ Ա Ռ Ո Ց Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբերու-
թեան, վերաբերու (սփիւրիս) և միջառն. հիւանդ.
Կ. Մ. Յիկովսկի—9—10 ժ. աշքի, ներքին և
նեղաբային հիւանդ.

Կ. Ք. Գեղիկի—12—1 ժ. սկանչի, քթի և կա-
կորի հիւանդ.

Ջ. Ք. Բարանասեան—11—12 ժ. կանանց և երե-
խայց հիւանդ.

Պ. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երե-
խայց հիւանդ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

Բ. Յ. Պրոսպետով—5—6 ժ.

Ս. Ն. Շալապով—6—7 ժ. նեղաբային (եղեկ-
արարութիւն), վնաս. և մարմն. հիւանդ.

Պ. Ա. Թաւրաճեան—7—8 ժ. ներքին և երե-
խայց հիւանդ.

Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.

Վ. Ս. Զաւրսկի—8—9 ժ. համախորտի (կոն-
սիլիումի) և սպիւրացիայի համար առանձին.

Օ. Տ. Սալախով—առանձին. ծաղիկաւոր և բժշ-
կան մարմնամարդ. զիմել 11—1 ժ. հիւանդանոցի վերահսկող.

Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Առանձին և բերանի խոռոչի հիւանդութիւն-
ները

Բժիշկ Գ. Ս. ԱԼԻԲԵԳԵԱՆ
Բ Ա Պ Ի Ո Ւ Մ
Հնդուում է հիւանդներ
Առաւօտեան 9—1 ժ. եւ երեկոյեան 5—7 ժ.
Բարեախոսական փող, № 16, տ. Դադա-
շուի. Բարյանսկայա փող, № 16, Դ. Դադաշե-
ան. 9—10

Հ Ր Ա Ի Է Բ
Ա. Ստոյ 24-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամի
11-ին, երրորդ անգամ հրաւիրում են
ՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԽԱԿԱՆՆԵՐԸ
ժողովը, նոյն եկեղեցու երէցփոխի հաշիւները
զննելու:
1—1
Հ. ա. ք. Խարաղեանց

Բ Շ Կ Ա Պ Ե Տ
ԳԵՌՈՐԳ ԹԱԴԵՆՍԻԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ:
Հնդուում է հիւանդներին ամեն օր, առաւ-
տեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օ-
րից) 5—7 ժ.: Վերաբերու (սփիւրիս) և միջառն. հիւանդ.
№ 24: (Կ. Ն. Ն.) 17—20

ՈՒՐԱՆԻԱ
Կ. Յիւսարթի աստղագիտական վէպը
Թարգմ. Հ. Առաքեանի
Ծախվում է. Թիֆլիսում—Կենտրոնական
գրադատարանում եւ Գ. Գալստեանի մօտ,
Порисъ-Меликовская. 11: Բ ա գ ու —Ս. Յա-
րուսիւնեանի գրադատարանում:
Գինն է՝ 1 ր. 50 կ. ճանապարհածախսով
7—10

Լոյս տեսնւում է փաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1901 թ.
Ծ Ո Ց Ի Ե Կ Պ Ա Տ Ի
(Շ ի Ր ա կ)

Օ Ր Ա Յ Ո Ց Յ Ե Բ Ը
Մ ո յ Ի օրացոյցը զարգարված է ներսէս Մ
Կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Բաթիկի եւ
Յ. Ալիազովսկու պատկերներով, ունի բոլոր-
վին նոր եւ հետաքրքիր յաւելումներ՝ ամենաօգ-
տակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշ-
կարան, հարուստ երազանք ու նոր զուար-
ճալի փիւնկարան:

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խն-
րանքներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական-
պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատ-
մութիւններ, բոլորովին նոր ծիծաղալար ծա-
ռակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողո-
վրդական առանձին, ժողովրդական երգեր,
գիւղական լէճեր, ընտիր բանաստեղծութիւն-
ներ, զուարճալի հանկուկներ, շուտասկուկ-
ներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ
օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ:
Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է
յայտնի լիտոգրաֆիայով, 15 գոյնով, ծանկա-
ցողները մանրամասն բովանդակութիւնը տը-
պագրված առանձին թերթով կարող են ստա-
նալ ձրի:
Գինը՝ ծ ո յ ի ն ը—20 կօպ., պ ա տ ի ն ը—50
կօպ. զուարճալի գնորդներին լինում է զիջում:
Դիմել՝ Александрополь. Карапету Апинянъ,
կամ Alexandrop Karapet Apinian (Caucase):
Ծանկացողները թող չապակն, որ իր ժամանա-
կին կարողանանք պատուէրները ճշգրտեմք
կատարել:
(Կ) 13—17

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլ-
տուութեամբ: Մեծ արկղիկը 5 րոպէի, փոք-
րը—3 ր. և 1 ր. 50 կ.:
ՊԻՓԼԱԳԻՆԻՆԵ
ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուցնելու և ամրացնելու համար,
ոչնչացնում է թեփուր Գուրու է եկել նաեւ
բոլորովին նոր միջոց

Ձ Ո Ւ Ի Կ Ա Ր Ը
Երեւանի քննչութիւն և սպիտակութիւն տա-
լու համար, ոչնչացնում է արեւի պատճա-
ռած սևութիւնը, մուգները, տալիս է կա-
շտին քննչութիւն և սպիտակութիւն: Այդ
գնեքը չափաւոր են. մեծ արուակը, արկղի-
կի մէջ, 2 րոպէի, փոքրը—1 ր. 50 կ.
Տախտակ են բոլոր պարֆումերական և
ղեղալճառական խոտովներում Գա-
ւոր պահանջը գտնվում է Պետերբուրգում,
Պուկիսկայա փողոց տ. № 15, բնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում: Սրեանեան հրապարակ
և նրա բաժանմունքում, Միջալեւան փո-
ղոց և Բազում, նաեւ Միջալեւան կամուր-
ջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատ-
ներում: Օտարաբարաբարներին պատուէր-
ները կատարվում են անմիջապէս՝ պատուով:
28—100

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի
ՆԱԽԱՐԱՐԻՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՈՒԹԻՒՆԸ
յայտարարում է ի դիտութիւն պ. պ. բաժնետէ-
րերի, որ համաձայն հոկտեմբերի 22-ի կայա-
ցած ընդհանուր ժողովի որոշման, նշանակվում
է արտակարգ ընդհանուր ժողով առաջիկայ
1901 թուի յունվարի 14-ին, կիրակի, ժամի
11-ին, քաղաքային դումայի դահլիճում, ուր
պիտի ընտրվեն հինգ զիրեկտորներ:
3—3

Կիրակի, յունվարի 21-ին, 1901 թ.
Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ժ Ո Ղ Ո Վ Ե Ր Ս Ն Ի Դ Ս Ն Լ Ի Ճ Ո Ւ Մ
Կը արվի գեղարուեստական երեկոյ

2ԻՆԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ
Յօգուտ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան
Պարահանդէսին կը լինեն չինական պարեր՝ ազգային հագուստներով և մի ազնւական
չինուհի կը բաժանէ սիրարկներ և կօտիլիօնի ընծաներ:
Տիկնիւններն ինքուրմ են սանրված չինական ձեւով, իսկ տղամարդիկ՝ ունենան չի-
նական հովհարներ: Զը ցանկացողները վճարում են տուգանք 50 կօպէկ:
Ս կ ի զ Բ Ն Ե Ե Ե Ե Կ Ո յ Ե Ա Ն 10 ժ ա մ ի ն :
Մ Ո Ւ Տ Ք Ը 2 Դ. 10 Կ Ո Պ Ե Կ
Նախօրօք տոմսակ ստանալ ցանկացողները կարող են դիմել իշխ. Մ. Թումանեանցին (Բա-
րեախոսական, № 8):
(չ. 23, յունվ. 4, 9, 13 եւ 18)

Ը Գ Կ Ե Բ Ո Ր Ի Լ Ե
Բ Ր Օ Կ Ա Ր Ե Ի Ը Ն Կ.
յանձնարարում է
„Պ Ե Տ Ր Օ Լ“ (Հեղ.ՈԿԿ)
մագերը ամբացնելու համար:
—
„Պ Ե Տ Ր Օ Լ“
(ՍԱՊՈՆ) Մագերի թեփը ոչնչացնելու համար: 5—10
(20)

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԵՑՆԵԼՈՒ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
Բաց է ամեն օր առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 12, իսկ երեկոյեան ժամի 5-ից մինչեւ
7-ը: Նիկողայովսկայա փողոց, № 70, տեղեֆոն № 567.
1—5 Գործակալ ԱԼԷՔՍԵՅ ԳՐԻԳՐԵՎԻԺ ՍՆԵԺԿՈՎ

1882 1849 1841 1861 1896
Ա Զ Դ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ամենահին Ֆրիման Ռուսաստանում
Լ. եւ Ա. ԶԱՎԵՍԼՈՎՆԵՐԻ ՎՅՐԱՄԱՅՈՒՄ
պողպատեայ իրեղենների արտադրութեան ընկերութիւն:
Մօսկվայի վարչութեան գրասենեակը եւ խանութը Տեղագիտական Եւ
Նիկողայովսկայա փողոցից ՏՐԵՏԵԱՎՈՎԻ տունը, № 10:
Գործարանը գտնվում է Գորբատովի գաւառի Վոլոյսկի գիւղում Նիժնեգորոյի նա-
հանգում, Գործարանը բաժանմունքը—Վալդիմիրի նահանգի Նովոսելի գիւղում, խա-
նութիւնը—Մոսկվայում, Նիժնեգորոյի տոմսվաճառում (Парская ул., սեփական խա-
նութիւն), Վոլոյսկի գործարանին կից, եւ Պալով գիւղում (Գորբատովի գաւառում) Բե-
լոգիւղի կոմիսիոներին մօտ:
Պարիզի համաշխարհային ցուցահանդէսում 1900 թ. ին ընկ կ-
րութիւնը ստացել է ոսկէ մեդալ:
№ 164, 212. 4—4

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու-
շաբթի մի անգամ:
Եւ հակառակ՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է
Բաթումից չորեքշաբթի, 20 դեկտեմբերի (2 յունվարի)—չորհանա՝ ԱՆԱՏՈՒԻ, կապիտան Բի-
ԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը
4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս դնելով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիպիլի մէջ, ընդու-
նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-
մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:
ԲԱԹՈՒՄԻՍՈՒՄ—պ. Վրկտօր ԴՆՆՈՒՄ, Նաբէլէժնայա ԹիֆլիսՈՒՄ—պ. Օ. Գ. Բարե-
կենդանեանին, Սիօնի փող. Նովախարովսկի եւ Մայսուրաճի քաղաքաւոր: ԲԱԹՈՒՄ—պ. Գ.
Է. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէլէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27. ՆՕՎՈՐՈՍՍ-
ՍԻՅՈՎ—Վալդիմիրի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Կ. Ն. Ն.) 9—20